

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԶԱՂԱԶԱՑԻԱԿԱՆ
ԱՎԻԱՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը (այսուհետ՝ Գլխավոր վարչություն) իր գործունեությունն իրականացնում է տարեկան աշխատանքային ծրագրի համաձայն՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի, Կառավարության, Վարչապետի որոշումներով, կարգադրություններով, հանձնարարականներով և հրահանգներով:

Գլխավոր վարչության պետի հրամանով հաստատվել է Գլխավոր վարչության 2009 թվականի գործունեությունն ապահովող միջոցառումների ծրագիր, որը ներառել է ինչպես Գլխավոր վարչության խնդիրներից և գործառնություններից բխող միջոցառումները, այնպես էլ բնագավառը կարգավորող իրավական ակտերի մշակման ժամանակացույցը:

Հաշվետու տարում միջազգային ավիացիոն կառույցներին Հայաստանի Հանրապետության ավիացիոն համակարգի ինտեգրման ուղղությամբ Գլխավոր վարչության կողմից իրականացվել են մի շարք միջոցառումներ:

Գլխավոր վարչության պատվիրակությունը 2009 թվականի մարտի 27-ին Բրյուսելում մասնակցել է Աերոնավիգացիայի անվտանգության եվրոպական կազմակերպության (Eurocontrol) գլխավոր գրասենյակում կայացած խորհրդի հատուկ ժողովին: Ժողովի առանցքային հարցերից էր «Միասնական եվրոպական երկնքի օդային երթևեկության կառավարման հետազոտության համատեղ ձեռնարկության և Աերոնավիգացիայի անվտանգության եվրոպական կազմակերպության միջև համաձայնագրի» և «Աերոնավիգացիայի անվտանգության եվրոպական կազմակերպության master plan-ով և աշխատանքային ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման համար աշխատանքային բազմակողմանի համաձայնագրի» նախագծերի քննարկումը: Ներկայումս Եվրամիության քաղաքականության շրջանակներում փորձ է արվում առավելապես միասնականացնել օդային երթևեկության կառավարմանն առնչվող խնդիրները և դրանք դիտարկել մեկ տեսանկյունից:

2009 թվականի նոյեմբերի 4-5-ը Միջպետական Ավիացիոն Կոմիտեի պատվիրակությունը աշխատանքային այց է ունեցել Հայաստանի Հանրապետություն և ծանոթացել ավիացիայի բնագավառում իրականացված փոփոխություններին և զարգացումներին: Պատվիրակությունը այցի ընթացքում արձանագրել է «Զվարթնոց» օդանավակայանի նկատելի առավելությունները տարածաշրջանում (հագեցած տեխնիկական հնարավորություններ, եվրոպական չափանիշներին համապատասխան սպասարկում), մատուցվող նավիգացիոն ծառայությունների ձեռքբերումները (ինստիտուցիոնալ, օրենսդրական, նորմատիվ-իրավական բազան, օդային երթևեկության կառավարման ընթացակարգերը, տեխնիկական ապահովման աերոնավիգացիոն տեղեկատվության համապատասխանեցումը միջազգային ստանդարտներին, թռիչքների անվտանգության կառավարման համակարգը, կադրերի ուսուցումը): Պատվիրակությունը դրական է գնահատել նաև «Արմավիա» ավիաընկերության օդանավերի պարկը, ինչպես նաև անձնակազմի վերապատրաստման գործընթացի և 2009 թվականի IOSA (IATA Operational Safety Audit) ծրագրով անցկացված ստուգման արդյունքները:

2009 թվականի դեկտեմբերի 9-ին ՌԳ մայրաքաղաք Մոսկվայում տեղի է ունեցել ՌԳ և ՀՀ ավիացիոն իշխանությունների պատվիրակությունների միջև հանդիպում: Հանդիպմանը քննարկվել են երկու երկրների միջև օդային հաղորդակցություններին, դրանց կարգավորմանը վերաբերող հարցեր, ինչպես նաև օդային փոխադրումների շուկաների ազատականացմանն ուղղված քայլերը, ստորագրվել է արձանագրություն:

2009 թվականի դեկտեմբերի 11-ին Գլխավոր վարչության պատվիրակությունը մասնակցել է ՄԱԿ-ի Ավիացիայի և օդային տարածքի օգտագործման խորհրդի 29-րդ նիստին, որտեղ մասնակից-պետությունների թռիչքային անվտանգության վիճակը և միջոցառումների ծրագիրը

վերլուծելիս՝ դրական գնահատական է տրվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի թռիչքային անվտանգության ոլորտում կատարած աշխատանքներին և ներկայիս վիճակին, ինչը հաստատվել էր նաև Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿԱՕ) կողմից դեռևս 2007 թվականին անցկացված թռիչքային անվտանգության համընդհանուր ստուգման արդյունքներով:

Անդրադառնալով ԱՊՀ տարածքում փոքր ավիացիայում ավիավթարների մեծ ցուցանիշին՝ նշվել է, որ միայն Հայաստանի Հանրապետությունում է, որ խիստ հետևողականություն է ցուցաբերվում օդանավի նկատմամբ ընդունված ավիացիոն պահանջներին:

2009 թ. սեպտեմբերի 15-ին Գյումրի քաղաքում Ռ-Գ Ուլյանովսկ քաղաքի Քաղաքացիական ավիացիայի բարձրագույն ավիացիոն ուսումնարանի (ինստիտուտի) և Գլխավոր վարչության միջև կնքվեց հուշագիր՝ հանաձայն որի նախատեսվում է ավիացիոն մասնագետների, մասնավորապես, օդաչուների պատրաստման գործում համագործակցություն: Ուսուցման գործընթացը կազմակերպվելու է ինչպես մասնավոր, այնպես էլ Ռ-Գ պետբյուջեի ֆինանսավորմամբ: Բացի ավիացիոն մասնագետներ պատրաստելուց, նախատեսվում է նաև վերապատրաստման և մասնագետների որակավորման բարձրացմանն ուղղված համագործակցություն, ինչպես նաև ՀՀ-ում միջին մասնագիտական կրթության ծրագրերի շրջանակներում պատրաստվող ավիացիոն մասնագետները հնարավորություն կունենան Ուլյանովսկում ստանալ բարձրագույն կրթություն:

2009 թվականի հունիսի 16-ին ուժի մեջ է մտել «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև օդային տրանսպորտի մասին» (բաց երկնքի) համաձայնագիրը:

2009 թվականի հուլիսի 3-ին ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Հունաստանի Հանրապետության կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին» համաձայնագիրը:

2009 թվականի դեկտեմբերի 10-ին ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Լատվիայի Հանրապետության կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին» համաձայնագիրը:

2009թ. ընթացքում Գլխավոր վարչության կողմից ուսումնասիրվել և «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ընթացք են տրվել Չեխիայի, Իսլանդիայի, Սլովակիայի, Թունիսի, Մերքիայի, Ուկրաինայի, Տաջիկստանի և Թուրքմենստանի կառավարությունների հետ օդային հաղորդակցությունների մասին համաձայնագրերի նախագծերը:

«Եվրոպական քաղաքացիական ավիացիայի կոնֆերանսի (ԵԿԱԿ) և Միացյալ ավիացիոն իշխանությունների (ՄԱԻ) ուսումնական կենտրոն» կազմակերպությունների կողմից 2009 թվականի համագործակցության ծրագրի շրջանակներում անդամ-պետություններին առաջարկված ուսումնական դասընթացների մասով ապահովվել է Գլխավոր վարչության համապատասխան մասնագետների մասնակցությունը՝ հավաստագրերի տրամադրմամբ:

Գլխավոր վարչության աշխատակիցները մասնակցել են Եվրոպական հանձնաժողովի կողմից կազմակերպված «Թվինինգ» ծրագրի շրջանակներում կազմակերպված սեմինարներին:

2009 թվականի հունիսի 30-ից ՄԱԻ կազմակերպության լուծարումից հետո թռիչքային անվտանգության եվրոպական համակարգին ինտեգրման շարունակական գործընթացի ապահովման նպատակով Գլխավոր վարչությունը 2009 թվականի հուլիսի 7-ին Ստրասբուրգ քաղաքում աշխատանքային համաձայնագիր է կնքել Եվրոպական թռիչքային անվտանգության գործակալության¹ հետ:

Եվրոպական հարևանության քաղաքականության Հայաստան-ԵՄ գործողությունների ծրագրի շրջանակներում 2009-2011թ. իրականացվելիք գերակա խնդիրների և առաջնահերթ

¹ European Aviation Safety Agency (EASA)

միջոցառումների մասով 2009 թվականի ընթացքում Գլխավոր վարչություն կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարության և ԵՄ միջև ավիացիայի ոլորտի կարգավորմանն առնչվող հարցերի շուրջ համագործակցության խորացում, ներառյալ շուկա մուտք գործելը.

- Ընդունվել է «Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:
- Ընդունվել է «Օդանավ շահագործողների պատասխանատվության պահովագրության նվազագույն ծածկույթի սահմանաչափերը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:
- Ուժի մեջ է մտել 2008 թվականի դեկտեմբերի 9-ին Բրյուսելում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Եվրոպական Համայնքի միջև օդային հաղորդակցությունների որոշակի ասպեկտների վերաբերյալ (հորիզոնական) համաձայնագիրը»:
- ՀՀ-ն 2009 թվականի հոկտեմբերի 28-ին վավերացրել է «Միջազգային օդային փոխադրումների որոշ կանոնների միասնականացման մասին» Կոնվենցիան (Մոնրեալ, 1999 թվականի մայիսի 28):
- Եվրոպական հարևանության քաղաքականության գործիք հանդիսացող «Թվինինգ» ծրագրի շրջանակներում Եվրոպական հանձնաժողովի պատվիրակության հետ համատեղ պատրաստվել և Եվրոպական Միության անդամ երկրներին է շրջանառել Թվինինգ գործիքի ներքո իրականացվելիք «Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կարողությունների զարգացում համընդհանուր ավիացիոն պահանջները Եվրոպական Միության ավիացիոն անվտանգության կանոնակարգերը կիրառելու նպատակով» ծրագրի նկարագիրը (ֆիշ) և նախատեսվում է ԵՄ անդամ պետություններից առաջարկի ստացում:
- «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան Ավիացիոն Միասնական Պահանջների (JAR) և EASA-ի PART-երի անգլերեն լեզվով ընդունելու ուղղությամբ ընդունվել է ՀՀ կառավարության որոշում:
- Միացյալ ավիացիոն իշխանությունների «Ավիացիոն Միասնական Պահանջների» (JAR) և Եվրոպական թռիչքային անվտանգության գործակալության պահանջներին համապատասխան փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն պետի 2004 թվականի դեկտեմբերի 9-ի N 192-Ն հրամանում:
- Հաստատվել է «Վտանգավոր համարվող, սակայն օդային փոխադրման համար չարգելված բեռների փոխադրման կարգը:

2. Ավիացիոն անվտանգության ոլորտում համագործակցություն.

- Լրացումներ և փոփոխություններ են կատարվել ոլորտը կարգավորող իրավական ակտերում՝ դրանք համապատասխանեցնելով ԻԿԱՕ և Եվրամիության ԻԿԱՕ և ԵԿԱԿ կողմից ներդրված նոր ստանդարտներին:
- Հայաստանի Հանրապետության օդանավակայանների անմաքս առևտրի խանութների գործունեությունը ԵՄ օրենսդրության համապատասխանեցման նպատակով 2009թ. փետրվարից կիրառվում են անմաքս առևտրի խանութների գործունեությանն առնչվող ԵՄ ավիացիոն անվտանգության պահանջները և ստանդարտները:

Քաղաքացիական ավիացիայի բնագավառում միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության հետ կապված անդամավճարների գծով պարտավորությունները հաշվետու ժամանակաշրջանում կատարված են՝ բացառությամբ Միջպետական Ավիացիոն Կոմիտեի (ՄԱԿ):

2009թ ընթացքում Գլխավոր վարչության աշխատակիցները իրականացրել են «Զվարթնոց» օդանավակայանում ուղևորների սպասարկման գործընթացի նկատմամբ վերահսկողություն, ինչպես նաև համագործակցել են ՀՀ օդանավակայաններում իրենց գործառնություններն իրականացնող պետական կառավարման այլ մարմինների հետ՝ աջակցելով նրանց առջև դրված խնդիրների կատարմանը: Զմեռային շրջանում պարբերական վերահսկողություն է իրականացվել

«Զվարթնոց» օդանավակայանի աերոդրոմային միջոցների և օդանավերի վերգետնյա էլեկտրական սնուցման միջոցների շահագործողական վիճակի նկատմամբ:

2009թ. վերահսկողություն է իրականացվել ««Արմավիա»-ին ֆինանսավորում տրամադրելու վերաբերյալ ներդրումային պայմանագրի» դրույթների կատարման նկատմամբ: «Արմավիա» ավիաընկերության ուղևորափոխադրումների ծավալը աճել է 9,5%-ով՝ փոխադրելով 711,7 հազար ուղևոր: Նման ցուցանիշները, առաջին հերթին, ապահովվել են ընկերության կողմից իրականացվող չվերթերի կանոնավորության պահպանման և արևմտյան արտադրության օդանավերի շահագործման շնորհիվ:

2009թ. ընթացքում Գլխավոր վարչության կողմից սահմանված կարգով ուսումնասիրվել, վերլուծվել և համապատասխան ընթացք է տրվել Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմից, Հայաստանի Հանրապետության կառավարությունից, օրենսդիր և գործադիր մարմիններից ու անհատ քաղաքացիներից ու կազմակերպություններից ստացված թվով 3179 գրությունների:

2009թ. «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն, փոփոխվել են թվով 3 պաշտոնի անձնագրեր: Կազմակերպվել են թվով 7 մրցույթներ, որոնց արդյունքում համալրվել են թվով 4 թափուր պաշտոններ: 2009թ. ընթացքում ատեստավորվել է 8 և վերապատրաստվել 10 քաղաքացիական ծառայող: Հարցաշարերում կատարվել են փոփոխություններ՝ դրանք համապատասխանեցնելով ընդունված օրենսդրական ակտերին:

Գլխավոր վարչությունը հասարակայնության հետ կապերի առումով հաշվետու տարում ակտիվ համագործակցել է ՋԼՄ-ների հետ: Համակարգում տեղի ունեցող փոփոխություններն ու հասարակությանը հետաքրքրող խնդիրների պարզաբանումները լուսաբանվել են տպագիր մամուլով, ռադիոյով և հեռուստատեսությամբ: Հասարակության իրազեկման գործում մեծ նշանակություն ունեցող Գլխավոր վարչության պաշտոնական երկլեզու (հայերեն, անգլերեն) ինտերնետ կայքում տեղադրվում են Գլխավոր վարչության գործունեության, Հայաստանի քաղաքացիական ավիացիայի ոլորտին վերաբերող նորությունները:

ՀՀ ֆինանսների նախարարության հետ համատեղ Գլխավոր վարչության կողմից աշխատանքներ են տարվել Հայաստանի Հանրապետությունից օդային ուղևորների ելքի պետական տուրքի գանձումն ավիատոմսերի մեջ ներառելու նպատակով օրենսդրական փաթեթի մշակման և կիրառման ուղղությամբ:

Մշակվել և ՀՀ Ազգային Ժողովի քննարկմանն է ներկայացվել «Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կարատելու մասին», «Օդանավ շահագործողների պատասխանատվության ապահովագրության նվազագույն ծածկույթի սահմանաչափերը սահմանելու մասին» և «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող և ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և չի գանձվում» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը, (որոնք ընդունվել են ՀՀ Ազգային Ժողովի կողմից համապատասխանաբար 2009 թվականի հունիսի 10-ին և 2009 թվականի սեպտեմբերի 17-ին):

2009թ. ընթացքում մշակվել և Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության Վարչապետի կողմից հաստատվել են թվով 11 նորմատիվային, անհատական որոշումներ.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հուլիսի 3-ի N 825-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության 2009թ. մայիսի 7-ին թիվ 502-Ն որոշումը:
2. «Արմավիա» ավիաընկերություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներմուծված Ա-320 մակնիշի օդանավի նկատմամբ կիրառված «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմի ժամկետը երկարաձգելու մասին» ՀՀ կառավարության 2009թ. մայիսի 29-ին թիվ 578-Ա որոշումը:

3. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի N 1142-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2009թ. հունիսի 4-ին թիվ 635-Ն որոշումը:
4. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի N 944-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 23-ին թիվ 904-Ն որոշումը:
5. «Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի հուլիսի 30-ի N 643-Ա որոշումը:
6. «Արմավիա» ավիաընկերություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներմուծված Ա-319 մակնիշի օդանավի նկատմամբ կիրառված «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմի ժամկետը երկարաձգելու մասին» ՀՀ կառավարության 2009թ. սեպտեմբերի 10-ին թիվ 1023-Ա որոշումը:
7. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 2-ի N 965-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ին թիվ 1064-Ն որոշումը:
8. «Հայաերոնավիգացիա», «Ավիաուսումնական կենտրոն» և «Ավիաբուժ» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունների կանոնադրական կապիտալներում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 30-ին թիվ 881-Ա որոշումը:
9. «Վտանգավոր բեռների օդային փոխադրման, վտանգավոր բեռների սպասարկման աշխատանքներն իրականացնող կազմակերպություններին և վտանգավոր բեռների օդային փոխադրումների սպասարկումն իրականացնող կազմակերպություններին թույլություն տալու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2009 թվականի նոյեմբերի 26-ին թիվ 1372-Ն որոշումը:
10. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությանը օտար լեզվով նորմատիվ իրավական ակտեր ընդունելու համար համաձայնություն տալու մասին» ՀՀ կառավարության 2009 թվականի նոյեմբերի 19-ին թիվ 1318-Ա որոշումը:
11. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 1307-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2009 նոյեմբերի 26-ին 1371-Ն որոշումը:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի կողմից հաստատվել և պետական գրանցում են ստացել թվով 14 նորմատիվ իրավական ակտեր.

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2009 թվականի հունվարի 20-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2007 թվականի մարտի 9-ի N 41-Ն հրամանում լրացում կատարելու մասին» N 5-Ն հրամանը:
2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2009 թվականի փետրվարի 26-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2006 թվականի ապրիլի 27-ի N 61-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» N 17-Ն հրամանը:
3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2009 թվականի ապրիլի 17-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2006 թվականի ապրիլի 27-ի N 61-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» N 44-Ն հրամանը:
4. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2009 թվականի հունիսի 18-ի «Հայաստանի

- Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցչի 1995 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 59 հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 70-Ն հրամանը:
5. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2009 թվականի հունիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության 1995 թվականի մարտի 10-ի թիվ 44 հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 71-Ն հրամանը:
 6. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2009 թվականի հունիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության 1994 թվականի ապրիլի 22-ի թիվ 80 հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 72-Ն հրամանը:
 7. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2009 թվականի հունիսի 18-ի «Չվարթնոց» օդանավակայանում Հայաստանի Հանրապետության լիազոր ներկայացուցչի 1994 թվականի մայիսի 11-ի թիվ 27 հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 73-Ն հրամանը:
 8. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2009 թվականի հուլիսի 21-ի «Օդային ուղիների շահագործման թույլտվությունների տրման պահանջների և պայմանների կանոնակարգը հաստատելու մասին» N 98-Ն հրամանը:
 9. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2009 թվականի հուլիսի 21-ի «Օտարերկրյա օդանավ շահագործողների կողմից Հայաստանի Հանրապետություն կանոնավոր և ոչ կանոնավոր օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվությունների տրման կանոնակարգը հաստատելու մասին» N 99-Ն հրամանը:
 10. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2009 թվականի հուլիսի 29-ի «Օդանավ շահագործողի վկայականի և ավիափոխադրողի մասնագրի տրման նկատմամբ պահանջների և դրանց տալու կարգը»-ը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2003 թվականի հունվարի 10-ի թիվ 2-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 108-Ն հրամանը:
 11. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2009 թվականի սեպտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2007 թվականի մարտի 29-ի թիվ 41-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» N 130-Ն հրամանը:
 12. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2009 թվականի սեպտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2007 թվականի մարտի 28-ի թիվ 136-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» N 133-Ն հրամանը:
 13. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2009 թվականի հոկտեմբերի 15-ի «Ավիացիոն անվտանգության ծառայությունների անձնակազմերի անդամների ստեստավորման կանոնակարգը հաստատելու մասին» N 142-Ն հրամանը:
 14. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2009 թվականի նոյեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2007 թվականի մայիսի 14-ի թիվ 79-Ն հրամանում լրացումներ կատարելու մասին» N 166-Ն հրամանը:

ԹՈՒՉՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

2009 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության օդանավերի պետական ռեգիստրում գրանցվել է 16 օդանավ: Նույն ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության օդանավերի պետական ռեգիստրից հանվել է 7 օդանավ:

Հաշվետու ժամանակաշրջանում տրվել են.

- քաղաքացիական օդանավի գրանցման 35 սերտիֆիկատ,
- քաղաքացիական օդանավի ապագրանցման 15 սերտիֆիկատ,
- քաղաքացիական օդանավի պիտանիության 63 սերտիֆիկատ,
- օդանավի ադմուլի 16 սերտիֆիկատ,
- օդանավի ռադիոկայանի 61 վկայական:

Հաշվետու ժամանակաշրջանում Գլխավոր վարչության մասնագետները մասնակցել են օտարերկրյա օդանավերի 1 ադետի (2009թ. հուլիսի 15-ին Թեհրան-Երևան չվերթը իրականացնող «Կասպիան Էյրլայնս» ավիաընկերության SՈՒ-154Մ օդանավի ադետը) ու 1 միջադեպի մասնագիտական քննություններին: Շարունակվել է նաև մասնակցությունը 2008թ. փետրվարի 14-ին «Զվարթնոց» օդանավակայանում «Բելավիա» ավիաընկերության CRJ-100 օդանավի հետ տեղի ունեցած վթարի մասնագիտական քննությանը:

Հաշվետու ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում թվով 54 տեսչական ստուգումներ անցկացվել են Հայաստանի Հանրապետությունում գրանցված օդանավերի նկատմամբ:

Հայաստանի Հանրապետության տարածքում անցկացվել են օտարերկրյա օդանավերի տեսչական թվով 36 ստուգումներ համաձայն SAFA ծրագրի և կատարած ստուգումների հաշվետվությունները գրանցվել են տվյալների բազայում:

Գլխավոր վարչության մասնագետները օդաչուների թռիչքավարման տեխնիկայի ստուգման և անձնակազմի անդամների օդում գործնական աշխատանքի գնահատման նպատակով իրականացրել են թվով 11 թռիչքային տեսչական ստուգումներ:

Գլխավոր վարչության մասնագետները մասնակցել են՝

- Հայաստանի Հանրապետության տեխնիկական անվտանգության հայեցակարգը մշակող միջգերատեսչական հանձնաժողովի աշխատանքներին,
- Հայ-ռուսական ռազմատեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի աշխատանքներին,
- Հայաստանի Հանրապետության տրանսպորտային անվտանգության համակարգի ազգային ռազմավարության մշակման աշխատանքային խմբի աշխատանքներին,
- Եվրոպական կառույցների հետ Հայաստանի Հանրապետության պետական մարմինների համագործակցության շրջանակներում «Մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա վնասակար նյութերի ներգործության ռիսկի նվազեցմանն ուղղված ազգային ռազմավարության» մշակման աշխատանքային խմբի աշխատանքներին:

Գլխավոր վարչության մասնագետները մասնակցել են 2009թ. ապրիլի 6-ից 7-ը TRACECA ծրագրի շրջանակներում մասնագետների Հայաստանի Հանրապետություն կատարած այցի ժամանակ թռիչքների անվտանգությանը վերաբերվող մի շարք հարցերի քննարկմանը և ծրագրով նախատեսված միջոցառումներին, ներկայացրել թռիչքների անվտանգության ներկա մակարդակը:

Գլխավոր վարչության մասնագետը 2009թ. հունիսի 8-ից 11-ը մասնակցել է Մոսկվայում ՄԱԿ-ի, ԻԿԱՕ-ի, FAA-ի, Թռիչքների անվտանգության համաշխարհային հիմնադրամի, Էյրբաս և Բոինգ ընկերությունների կողմից ՄԱԿ-ում կազմակերպված Թռիչքների անվտանգության գլոբալ քարտեզին վերաբերվող հանդիպմանը և համապատասխան աշխատանքային խմբի աշխատանքին:

Հաշվետու ժամանակաշրջանում Գլխավոր վարչության մասնագետները որակավորման բարձրացման նպատակով.

- 2009թ. օգոստոսի 4-ից մինչև 22-ը մասնակցել է Սինգապուրի ավիացիոն ակադեմիայի կողմից անցկացված «Թռիչքների անվտանգության վերահսկման տեսուչ (ինժեներինգ)» թեմայով դասընթացին և ստուգարքների հանձնելու արդյունքում ստացել համապատասխան սերտիֆիկատ:

- TRACECA ծրագրի շրջանակներում թվով 3 մասնագետներ մասնակցել են «Թռիչքային անվտանգության ապահովման և շրջակա միջավայրի պահպանության» ծրագրով դասընթացին և ստուգարքների հանձնելու արդյունքում ստացել համապատասխան սերտիֆիկատներ:
- TRACECA ծրագրի շրջանակներում մասնակցել է 2009 թվականի դեկտեմբերի 14-ից 15-ը Ստամբուլում անցկացված արտանետումների առևտրային ETS համակարգին նվիրված սեմինարին:

Թռիչքների անվտանգության տեսչական վարչության վերահսկողությամբ «Ավիատուսմնական կենտրոն» ՓԲ ընկերությունում կազմակերպվել է Դայմոնդ - 40Դ (Da-40D) տիպի օդանավի օդաչուների պատրաստման գործընթացը և կատարվել են ստուգողական թռիչքներ Գլխավոր վարչության օդաչու-տեսուչների վերահսկողությամբ:

ԹՈՒՉՔԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՈԼՈՐՏ

Հայաստանի Հանրապետությունում գրանցված քաղաքացիական օդանավերի թռիչքային պիտանիությունը և թռիչքների անվտանգությունն ապահովելու նպատակով 2009թ. ընթացքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից քննարկվել և տրվել է թվով 39 վկայականներ ու 859 այլ թույլտվություններ թռիչքային անձնակազմի անդամներին, ինժեներատեխնիկական կազմին, բորտուղեկցորդներին և օդային երթևեկության կարգավարներին:
- Վերահսկողություն է իրականացրել ՄԻ-8ՄՏՎ-1 ուղղաթիռով ավիացիոն քիմիական աշխատանքների ծրագրի ապահովման ուղղությամբ:
- Իրականացվել է Հայաստանի Հանրապետության ավիաընկերությունների տեխնիկական սպասարկման և վերանորոգման թվով 18 կազմակերպությունների սերտիֆիկացում:
- Տրամադրվել է օդանավերի RNAV գոնալ նավիգացիայի համակարգում թռիչքներ իրականացնելու թվով 38 և RVSM համակարգում թռիչքներ իրականացնելու թվով 21 թույլտվություններ:
- Կատարվել է ELT վթարային թվով 21 ռադիոփարոսների գրանցում ԿՈՍՊԱՍ-ՍԱՐՍԱՏ համակարգում:
- Ըստ հայտերի մշակվել և շահագործողներին տրամադրվել է թվով 19 օդանավերի 24-բիտանոց հասցեներ:
- Իրականացվել է Ավիաընկերությունների տեխնիկական սպասարկման և վերանորոգման թվով 24 կազմակերպությունների տեսչական շահագործողական ստուգումներ:
- Իրականացվել են թռիչքավարության, կարգի բարձրացման և ինքնուրույն աշխատանքների թույլտվության ստուգողական թռիչքներ:
- «Սուխոյ սուպեր ջեթ» օդանավերի թռիչքային ու ինժեներատեխնիկական անձնակազմերի և բորտուղեկցորդների վերապատրաստման նպատակով Գլխավոր վարչության կողմից ճանաչվել է Իտալիայի Վենետիկի ավիացիոն ուսումնական կենտրոնը:
- Մշակվել է.
 1. Հայաստանի Հանրապետությունում ԻԿԱՕ 24-բիտ օդանավի հասցեի շնորհման Կարգ:
 2. JAR-21, 39, 66, 145, 147, JAR-M և JAR - MMEL/MEL փաստաթղթերի կիրառման ընթացակարգերի նախագծեր (լրամշակում):
 3. Ինժեներատեխնիկական կազմակերպությունների սերտիֆիկացման փաստաթղթերի փաթեթի հայերեն տարբերակ:
 4. Ինժեներատեխնիկական կազմակերպությունների նոր սերտիֆիկաներ և հին սերտիֆիկատների փոխարինել նորերով:
 5. Օդանավերի թռիչքային պիտանիության տեսչական ստուգումների ժամանակացույց:
 6. Համաձայն JAR-39 թռիչքային պիտանիության դիրեկտիվների հաշվառման, կիրառման և հաշվետվության փաստաթղթեր:
 7. ՀՀ-ում թեթև օդանավերի շահագործման հայեցակարգ: Որակավորման բարձրացման նպատակով`

- Գլխավոր վարչության մասնագետը 2009թ. հուլիսի 1-2-ը Նիդեռլանդներում մասնակցել է «JAR OPS-1» ծրագրով դասընթացին և հանձնելով սուգարքներ ստացել է համապատասխան սերտիֆիկատ:
- Գլխավոր վարչության մասնագետը 2009թ. օգոստոսի 17-18-ը Նիդեռլանդներում մասնակցել է «PART M» ծրագրով դասընթացին և հանձնելով սուգարքներ ստացել է համապատասխան սերտիֆիկատ:
- Գլխավոր վարչության թվով 2 մասնագետներ TRACECA ծրագրի շրջանակներում մասնակցել են «Թռիչքային անվտանգության ապահովման և շրջակա միջավայրի պահպանության» ծրագրով դասընթացին և հանձնելով սուգարքներ ստացել են համապատասխան սերտիֆիկատներ:

ՕՂԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՅՄԱՆ ԵՎ ՕՂԱՅԻՆ ԵՐՔՆԵԿՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈԼՈՐՏ

Օդանավակայանների սերտիֆիկացման և օդային երթևեկության կազմակերպման ոլորտում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Ուսումնասիրվել և տեղեկանք է ներկայացվել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը և տեղական ինքնակառավարման մարմիններին հանձնված օդանավակայանների շահագործողական հնարավորությունների վերաբերյալ:
- Ուսումնասիրվել և առաջարկություն է ներկայացվել Վայոց Ձորի մարզի Ջերմուկ քաղաքի նոր օդանավակայանի տեղադիրքի որոշման վերաբերյալ:
- Ուսումնասիրվել և առաջարկություն է ներկայացվել «Շիրակ» օդանավակայանի աերոդրոմի վազբուղու երկարացման նպատակահարմարությունը, թռիչքային սխեմաների փոփոխման տեսանկյունից:
- ԻԿԱՕ-ի N15 Հավելվածի պահանջների կատարման նպատակով ապահովվել է ՀՀ ամբողջ տարածքի խոչընդոտների թվային բազայի ստեղծման գործընթացը: Թվային բազայի առկայության մասին տեղեկատվությունը հրապարակվել է ՀՀ ԱՏԺ-ի մեջ:
- Առաջարկություններ է ներկայացվել ԻԿԱՕ-ի NN 2, 4, 10, 11, 14 և 15 Հավելվածներում և ՄԱԿ-ի «Ավիացիոն կանոններում» առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ:
- Չմեռային ժամանակաշրջանում իրականացվել է պարբերական վերահսկողություն «Չվարթնոց» օդանավակայանի աերոդրոմային միջոցների շահագործողական վիճակի նկատմամբ:
- Ուսումնասիրվել և եզրակացություն է ներկայացվել AKAS-II համակարգի կիրառման վերաբերյալ:
- Ուսումնասիրվել և եզրակացություն է ներկայացվել «Բրիֆինգ» կենտրոնում տեղադրված «ՍԱԴԻՄ-2Գ» օդերևութաբանական տեղեկատվության տրամադրման ավտոմատացված համակարգի ներդրման վերաբերյալ:
- Ուսումնասիրվել և եզրակացություն է տրվել «Ռեդինետ» ԲԲ և «ՏՄԿ» Հեռահաղորդակցության շինարարական կազմակերպություն» ՓԲ ընկերություններին ՀՀ տարածքի տարբեր մարզերում բջջային հեռախոսակապի ալեհավաք թվով 169 կայաների տեղադրման վերաբերյալ:
- ՀՀ ամբողջ տարածքի խոչընդոտների թվային բազայի տվյալների հիման վրա ուսումնասիրվել, մշակվել և ներկայացվել է Գլխավոր վարչության հետ չհամաձայնեցված «Orange» կազմակերպության բջջային կայաների ցանկը:
- Ուսումնասիրվել և առաջարկություն է ներկայացվել ՏԲԱՄԵԿԱ ծրագրի շրջանակներում իրականացվող վերապատրաստման դասընթացների և հանդիպումների վերաբերյալ:
- Ուսումնասիրվել և եզրակացություն է ներկայացվել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված «Էրեբունի» և «Արզնի» աերոդրոմների «Թռիչքների իրականացման հրահանգների» փոփոխությունների վերաբերյալ:
- Մշակվել և հաստատվել է «Օդային երթևեկության կազմակերպում, աերոնավիգացիոն կապ և դիտարկում իրականացնող և աերոնավիգացիոն տեղեկատվության ծառայություններ մատուցող կազմակերպությունների աուդիտի տարեկան ծրագրերի մշակման ուղեցույցը և աուդիտի հարցաթերթերը:

- Ուսումնասիրվել և առաջարկություն է ներկայացվել ՀՀ-ում Եվրոկոնտրոլ կազմակերպության կողմից մշակված «ETNA» տեղեկատվական համակարգի ներդրման վերաբերյալ:
- Ուսումնասիրել և առաջարկություն է ներկայացրել «Հայաերոնավիգացիա» ՓԲ ընկերության կողմից մշակված «Աերոնավիգացիոն տեղեկատվության ծառայության աշխատակիցների մասնագիտական պատրաստվածության ապահովման և դրա պահպանման միջոցառումներ» և «Օդային երթևեկության սպասարկման ռադիոտեխնիկական ապահովման միջոցների տեղադրման և շահագործման միջոցառումների ընթացակարգը» փաստաթղթերի վերաբերյալ:
- Ուսումնասիրվել և եզրակացություն է ներկայացվել «Զվարթնոց» օդանավակայանի վազբուդու 265 մագնիսական ուղղվածությամբ պարզեցված լուսաազդանշանային համակարգի, ինչպես նաև PAPI վայրէջքագծային լույսերի տեղադրման վերաբերյալ:
- Ուսումնասիրվել և եզրակացություն է ներկայացվել «Զվարթնոց» օդանավակայանի վազբուդու վրա 1800 շրջադարձ կատարելու համար լրացուցիչ հրապարակի կառուցման վերաբերյալ:
- Ուսումնասիրվել և եզրակացություն է ներկայացվել «Արմավիա» ՓԲ ընկերության թռիչքային սխեմաների փոփոխման առաջարկության վերաբերյալ:
- Ուսումնասիրվել և եզրակացություն է ներկայացվել ՀՀ տարածքում հակակարկտային համակարգերի շահագործման պայմանների և թռիչքների վրա դրանց հնարավոր ազդեցության վերաբերյալ:
- Ապահովվել է «Ստեփանակերտ» օդանավակայանի աերոդրոմի և ուղևորային համալիրի վերագործարկման հետ կապված գործընթացը:
- Ուսումնասիրվել է «Շահագործողական բնութագրերի վրա հիմնված նավիգացիա (PBN) առաջարկություն ներդրման առաջարկը և ԻԿԱՕ առաջարկություն ներկայացվել PBN-ի հետ:

Որակավորման բարձրացման նպատակով Գլխավոր վարչության մասնագետը JAA կազմակերպության ծրագրի շրջանակներում մասնակցել է «Աերոդրոմների թռիչքային անվտանգությունը կանոնակարգող խմբի (GASR) դասընթացին և անցել համապատասխան սերտիֆիկացում:

ՕԳԱՅԻՆ ՓՈՒՍԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄ

Օդային փոխադրումների կարգավորման և լիցենզավորման նպատակով 2009 թվականի ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Դեկավարվելով «Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և «Հայաստանի Հանրապետության օդանավ շահագործողի սերտիֆիկատի և ավիափոխադրողի սերտիֆիկատի (մասնագրի) տրման կարգով» թվով 2 իրավաբանական անձանց տրվել է Շահագործողի սերտիֆիկատ, իսկ թվով 7 օդանավ շահագործողների համար երկարացվել է Շահագործողի սերտիֆիկատի գործողության ժամկետը: 22.07.2009թ. թիվ 101-Ա հրամանով կասեցվել է «Զլիբ Էյրվեյզ Ինթ. Լ» ՍՊԸ-ի օդանավ շահագործողի վկայականի գործողությունը, իսկ 18.09.2009թ. 126-Ա հրամանով դադարեցվել է ընկերության օդանավ շահագործողի վկայականի գործողությունը:

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության օդանավ շահագործողի սերտիֆիկատի և ավիափոխադրողի սերտիֆիկատի (մասնագրի) տրման կարգ»-ի 13-րդ կետը և օդանավ շահագործողի վկայականի և ավիափոխադրողի մասնագրի տրման հանձնաժողովի որոշումները թվով 4 օդանավ շահագործողների տրվել է Ավիափոխադրողի սերտիֆիկատ (Մասնագիր), իսկ թվով 1 օդանավ շահագործողի Ավիափոխադրողի սերտիֆիկատում (մասնագրում) կատարվել են փոփոխություններ:

«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 9-ի № 21-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և կանոնավոր օդային հաղորդակցության լիցենզավորման կարգն ու կանոնավոր օդային հաղորդակցության լիցենզայի ձևը հաստատելու մասին» №1252-Ն որոշման

համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հատուկ պաշտպանվածություն պահանջող պետական նշանակության փաստաթղթերի համար նախատեսված նոր ձևանմուշի Կանոնավոր օդային հաղորդակցության լիցենզիաներ են տրամադրվել Հայաստանի Հանրապետությունում գրանցված թվով 3 օդանավ շահագործողներին:

Օտարերկրյա ավիաընկերությունների Հայաստանի Հանրապետություն կանոնավոր և չարտերային չվերթների իրականացման նպատակով կազմակերպվել է ընթացակարգային գործընթացներ՝ համաձայն օդային հաղորդակցությունների մասին միջկառավարական համաձայնագրերի, արձանագրությունների և փոխըմբռնման հուշագրերի:

2009թ. ընթացքում ուսումնասիրվել և ընթացք են տրվել կանոնավոր օդային հաղորդակցությունների իրականացման նպատակով հայտեր ներկայացրած 26 ավիաընկերությունների, մեկից ավելի ոչ կանոնավոր օդային հաղորդակցությունների իրականացման նպատակով հայտեր ներկայացրած 10 ավիաընկերությունների և թվով 344 մեկանգամյա թռիչքների համար ներկայացված փաստաթղթերի փաթեթներին:

Համաձայն ներկայացված հայտերի իրականացվել են Հայաստանի Հանրապետությունում գրանցված և Հայաստանի Հանրապետություն կանոնավոր չվերթեր իրականացնող օտարերկրյա ավիափոխադրողների Ամառ 2009 և Ձմեռ 2009/2010 չվացուցակների համակարգման, հաստատման և ընթացիկ փոփոխման աշխատանքներ: Հաշվետու ժամանակաշրջանում ներկայացված հայտերի համաձայն «Արմավիա»-Ավիաընկերություն ՍՊԸ-ին և «Էյր Արմենիա» ՓԲԸ-ին տրամադրել են միջազգային օդային ուղիներով կանոնավոր և չարտերային չվերթերի կատարման համապատասխան թույլտվություններ:

Իրականացվել է Հայաստանի Հանրապետություն/ից իրականացված չվերթերի, ուղևորահոսքերի փոխադրումների շուկայի ուսումնասիրություններ և վերլուծություններ՝ ըստ փոխադրումների իրականացման տարածաշրջանների, երկրների և քաղաքների: Արդյունքում իրականացվել է շուկայի կարգավորում՝ ըստ հաճախականությունների և օդանավերի տիպերի:

Գլխավոր վարչության մասնագետները որակավորման բարձրացման նպատակով.

- TRACECA ծրագրի շրջանակներում թվով 2 մասնագետներ մասնակցել են «Թռիչքային անվտանգության ապահովման և շրջակա միջավայրի պահպանության» ծրագրով դասընթացին և սուգարքներ հանձնելով ստացել համապատասխան սերտիֆիկատներ:
- 2009թ. օգոստոսի 17-18-ը Նիդեռլանդներում մեկ մասնագետ մասնակցել է «Միջազգային իրավունք և քաղաքականություն» ծրագրով դասընթացին և հանձնելով ստուգարքներ ստացել է համապատասխան սերտիֆիկատ:

ԱՎԻԱՑԻՈՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրվել և հաստատվել են «Ավիաուսումնական կենտրոն» և «Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲ ընկերությունների աշխատակիցների նախնական պատրաստման և վերապատրաստման ավիացիոն անվտանգության, որոնողափրկարարական և օդային տրանսպորտով վտանգավոր բեռների փոխադրման աշխատանքների ուսումնական ծրագրերը:

Ավիացիոն անվտանգության մասով տեսչական ստուգումներ են իրականացվել «Ավիասերվիս» և «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲ ընկերություններում, որոնց արդյունքները ներկայացվել են վերը նշված ընկերություններին, բացահայտված թերությունների վերացման ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումների իրականացման համար:

Զննարկվել և հաստատվել են թվով 12 ավիաընկերությունների ավիացիոն անվտանգության ծրագրերը, ինչպես նաև ուսումնասիրվել է Ռուսաստանի Դաշնության «Վլադիվոստոկ ավիա», «Օրենբուրգ ավիա» և Թուրքիայի Հանրապետության «Ատլաս ջեթ» ավիացիոն անվտանգության ծրագրերը և ներկայացվել համապատասխան եզրակացություններ ԻԿԱՕ և ԵԿԱԿ փաստաթղթերի պահանջներին դրանց համապատասխանության վերաբերյալ:

Ուսումնասիրվել են ՀՀ օդային տարածքով վտանգավոր բեռների փոխադրման 96 հայտեր, որոնցից 89 հայտերի մասով ներկայացվել են համապատասխան առաջարկներ փոխադրման թույլտվություններ տալու վերաբերյալ, իսկ 7 հայտով ներկայացված փոխադրման

ենթակա վտանգավոր բեռները ԻԿԱՕ «Օդային տրանսպորտով վտանգավոր բեռների փոխադրման տեխնիկական հրահանգով» սահմանված կարգով քաղաքացիական օդանավերով փոխադրումն արգելված լինելու պատճառով մերժվել է:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում անցագրային և ներօբյեկտային վերահսկողության կարգը հաստատելու մասին» N1142-Ն որոշման պահանջների ապահովման նպատակով ստեղծվել է օդանավերի անձնակազմերի տվյալների բազա և ներդրվել է թռիչքային անցագրերի հատկացման նոր համակարգչային ծրագիր:

«Ավիացիոն անվտանգության ծառայությունների անձնակազմերի անդամների ատեստավորման կանոնակարգի» պահանջների ապահովման նպատակով մշակվել է ատեստավորման հարցաշարեր և պատրաստվել է ատեստավորման ծրագիր, իսկ 2009 թվականի դեկտեմբերի 14-ից իրականացվել է «Չվարթնոց» միջազգային օդանավակայանի ավիացիոն անվտանգության ծառայության թվով 306 աշխատողների ատեստավորում:

Գլխավոր վարչությունը «Ավիուսումնական կենտրոն» ՓԲ ընկերության հետ համատեղ ավիացիոն անվտանգության վերաբերյալ կազմակերպել և անցկացրել է «Արմավիա» ավիաընկերության բորտուղեկցողների ու օդանավակայանային ներկայացուցիչների նախնական պատրաստման դասընթացներ:

2009թ. ընթացքում Մոսկվա քաղաքի ԻԿԱՕ ավիացիոն անվտանգության տարածաշրջանային ուսումնական կենտրոնում վերապատրաստվել է 1 աշխատակից, ԵԿԱԿ կողմից կազմակերպված սեմինարներին՝ 4 աշխատակից:

Մշակվել և քաղաքացիական ավիացիայի համակարգում ավիացիոն գործունեություն իրականացնող կազմակերպություններ է ուղարկվել.

- քաղաչաշտպանությունում և արտակարգ իրավիճակների մասով կազմակերպչական ցուցումներն ու տարեկան միջոցառումների պլանը,
- Հայկական ատոմային էլեկտրակայանի միջուկային և/կամ ճառագայթային վթարների դեպքում Գլխավոր վարչության, «Չվարթնոց» միջազգային օդանավակայանի տարածքում գործունեություն իրականացնող կազմակերպությունների աշխատակիցների և ուղևորների պաշտպանության կազմակերպման պլանը:

2009թ. ընթացքում քաղաքացիական ավիացիայի համակարգի ընկերություններում իրականացվել են վթարափրկարարական ապահովմանն ուղղված հետևյալ միջոցառումները.

- կազմակերպվել են պարապմունքներ «Արմավիա», «Էյր Արմենիա» ավիաընկերությունների օդաչուական և ուղեկցող անձնակազմերի հետ,
- ստուգվել է օդանավակայանների վթարափրկարարային խմբերի հետ թեմատիկ գործնական պարապմունքների անցկացման ընթացքը,
- պարբերաբար ստուգվել է օդանավակայանների վթարափրկարարային հաշվարկների մարտունակությունը, օդանավակայանում և ընկերություններում առկա փրկարարական գույքն ու հանդերձանքի վիճակը,
- «Չվարթնոց» օդանավակայանում կազմակերպվել է վթարափրկարարային խմբերի 30 փորձնական տազնապ և մեկ գործնական ուսումնավարժական պարապմունք (14.12.2009թ.):

Ավիացիոն անվտանգության մասով ապահովվել է 66 Լիտեր «Ա» և 11 հատուկ չվերթերի սպասարկում:

2009թ. ընթացքում Գլխավոր վարչության մասնագետները մասնակցել են հետևյալ վերապատրաստման դասընթացներին ու ԵԿԱԿ-ի կողմից կազմակերպված սեմինարներին և ստացել համապատասխան սերտիֆիկատներ.

- 2009թ. մարտի 23-27-ը Մոսկվա քաղաքում «Արինտեխ» գիտաուսումնական կենտրոնում «Օդանավակայանում վթարափրկարարական աշխատանքների կազմակերպում և պլանավորում» որակավորմամբ:
- 2009 թվականի ապրիլի 27-30-ը Աթենք քաղաքում ԵԿԱԿ-ի կողմից կազմակերպված «Ավիացիոն անվտանգության ռիսկի կառավարում» որակավորմամբ:
- Փարիզ քաղաքում ԵԿԱԿ-ի անդամ երկրներին ավիացիոն անվտանգության մասով աջակցության ծրագրի շրջանակներում 2009 թվականի հուլիսի 6-ից 9-ը «Ավիացիոն անվտանգության ուսումնավարժական ազգային ծրագիր» ու «Շգնաժամային

իրավիճակների ազգային պլան» և 2009 թվականի սեպտեմբերի 8-ից 10-ը «Ձննման սարքավորումների օպերատորների սերտիֆիկացում» որակավորմամբ: 2009թ. ընթացքում ՀՀ քաղաքացիական ավիացիայում անօրինական միջամտության դեպքեր չեն գրանցվել:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գլխավոր վարչության համակարգի փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2009թ. ընթացքում ամբողջությամբ վճարվել են շահութաբաժինների գծով ՀՀ պետական բյուջեին ունեցած պարտավորությունները: Ստեփանավան» օդանավակայան» ՓԲ ընկերությունը 2008 թվականից ներկայացվել է մասնավորեցման:

Գլխավոր վարչության կողմից քննարկվել են օդանավակայանային ծառայությունների մատուցման սակագների փոփոխման հայտերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացվել հաստատման ու հրապարակման:

«Հայաերոնավիզացիա» ՓԲԸ

Ընկերության գործունեության զարգացման ծրագրերն կազմելիս կիրառվել է Եվրոկոնտրոլի կողմից մշակված մեթոդաբանությունը: Դրանք են.

- Եվրոկոնտրոլի կողմից սահմանված Եվրոպական պահանջների ներդրման ապահովման նպատակով՝ 2010-2014թթ. LCIP փաստաթղթի (զարգացման 5-ամյա Եվրոպական ծրագրի) մշակման աշխատանքների կազմակերպումն ու համակարգումը,

- Համաձայն ISO9001-2008 ստանդարտի պահանջների, ընկերությունում որակի կառավարման համակարգի ներդրման աշխատանքների՝ ներդրման պլանի, ներդրման առնչվող կազմակերպական, կառուցվածքային, համապատասխան ընթացակարգերի մշակման և դրանց ներդրման միջոցառումների իրականացումը,

- Ընկերության գործունեության հիմնական՝ ՕԵԿ, Ռ-ադիոտեխնիկական ապահովման, Աերոնավիզացիոն տեղեկատվության, Թռիչքների անվտանգության կառավարման համակարգի և Կադրերի վերապատրաստման ուղղություններով ներքին իրավական ակտերի մշակման և ներդրման աշխատանքների իրականացումը՝ ապահովելով դրանցում մասնագիտական մոտեցումների միասնականությունը և միասնական քաղաքականության կիրառումը:

Հայաստանի Հանրապետության օդային տարածքի երթևեկության բարելավման և կատարելագործման նպատակով կատարվել են որոշակի փոփոխություններ շահագործվող օդային մայրուղիներում: Եվրոկոնտրոլի և ԻԿԱՕ-ի պահանջների համաձայն փոխվել են ՀՀ օդային մայրուղիների անվանումները:

ՀՀ օդային տարածքում RNAV համակարգը ներդրվել է նաև 195 թռիչքային մակարդակից ներքև, որի ներդրման հետ կապված «Մաստեր» ավտոմատացված աշխատատեղերում կատարվել են փոփոխություններ կապված քարտեզագրության և մայրուղիների անվանումների հետ: ՀՀ հսկվող օդային տարածքը 460 թռիչքային մակարդակից բարձրացվել է մինչև 660 թռիչքային մակարդակ:

Թռիչքների անվտանգության կառավարման համակարգի աստիճանական ներդրման միջոցառումներն իրենց մեջ ներառել են ընկերությունում ավիացիոն իրադարձությունների առնչությամբ ներքին քննությունների անցկացման, ռիսկերի գնահատման և համակարգի գործունեության կատարելագործման աշխատանքները:

2009թ. ընթացքում ապահովվել է օդային երթևեկության կազմակերպման համակարգում անվտանգության վրա հնարավոր ներազդեցություն ունեցող փոփոխությունների դեպքերում առաջացող հնարավոր ռիսկերի գնահատման, այդ ռիսկերի մեղմելուն ուղղված միջոցառումների մշակման ու իրականացման ընթացակարգերի ներդրումը, այդ թվում Եվրոկոնտրոլի հետ համատեղ ՏՈ-ԼԿ11 համակարգի արդիականացման հետ կապված անվտանգության գնահատման աշխատանքների առաջին փուլի իրականացումը:

Ընկերության կողմից իրականացվել է Եվրոկոնտրոլի եվրոպական աերոնավիզացիոն տեղեկատվական բազայի (EAD) վարում և արդիականացման, ինչպես նաև Որակի Կառավարման Համակարգի (ISO 9001:2008) ամենամյա արտաքին աուդիտի,

վերասերտիֆիկացման և ներքին ատոլիտների պլանավորման, անցկացման և արդյունքների ամփոփման աշխատանքներ:

Հաշվետու ժամանակաշրջանում կադրերի ուսուցման և վերապատրաստման ուղղությամբ իրականացվել են.

- ՕԵԿ կարգավարների անգլերեն լեզվի ուսուցման կազմակերպումը, այդ թվում ընդհանուր և ավիացիոն անգլերեն լեզվի որակավորման բարձրացման 6 դասընթացներ անցկացումն ընկերությունում ընդհանուր թվով 33 կարգավարների և Միացյալ Թագավորության MLS ուսումնական կենտրոնում անգլերեն լեզվի որակավորման բարձրացման դասընթացների կազմակերպումը 28 կարգավարների համար,
- Նեդ մասնագիտական ուղղություններով ուսուցման կազմակերպումը ՕԵԿ մասնագետների, կադրերի վերապատրաստման բաժնի աշխատակիցների, SU տնօրինության մասնագետների համար Եվրոկոնտրոլի նավիգացիայի ինստիտուտում (Լյուքսեմբուրգում) և վարժասարքի հրահանգչի ուսուցումը Պրահայում,
- Կադրերի վերապատրաստման բաժնի աշխատակիցների, ԱՏԾ աշխատակիցների և SU տնօրինության մասնագետների անգլերեն լեզվի ուսուցման կազմակերպումն ընկերության ներսում և Հայաստանի Ամերկյան համալսարանում:

Ընկերությունում արդիականացվել են շահագործվող սարքավորումները, իրականացվել է կապիտալ նորագման և կապիտալ շինարարության աշխատանքներ:

Ավիաուսումնական կենտրոն ՓԲԸ

Ավիաուսումնական կենտրոնի գործունեության հիմնական նպատակը քաղաքացիական ավիացիան բարձրորակ կադրերով համալրելն է, կրթական գործընթացն արտադրությանը մոտեցնելը, միջազգային ավիացիոն կազմակերպությունների և գործատուների պահանջներին համապատասխան մասնագետներ պատրաստելը, որով և պայմանավորված է քաղաքացիական ավիացիայի անվտանգ և ապահով գործունեությունը:

2009 թվականին իրականացվել են թռիչքային ծրագրով նախատեսված 416 ժամ ուսումնավարժանքային թռիչքներ վարձակալված DA-40 օդանավով, որի ֆինանսավորումն ապահովվել է Գլխավոր վարչության արտաբյուջետային միջոցների հաշվին:

Ընդունելություն է կազմակերպվել «Թռչող հարմարանքների և շարժիչների տեխնիկական շահագործում»՝ ավիատեխնիկի որակավորման մասնագիտությամբ, որտեղ սովորում են 12 ուսանող:

2009-2010 ուսումնական տարում անվճար և վճարովի հիմունքներով ընդունվել են 53 ուսանող: 2010 թվականի փետրվարին ավարտելու են 31 ուսանող «Փոխադրումների կազմակերպում և կառավարում օդային տրանսպորտում» և «Օդային տրանսպորտի երթևեկության կառավարում» մասնագիտությունների գծով:

2009 թվականին ընթացքում սովորել են թվով 157 ուսանող և վերապատրաստվել են ավիացիոն մասնագիտությունների գծով թվով 307 ունկնդիրներ:

Համալրվել է կենտրոնի ուսումնատեխնիկական բազան, ձեռք է բերվել 7 նոր համակարգիչ, ստեղծվել է համակարգչային լսարան, կարգավարական կենտրոն, ընթերցասրահ:

Կատարվել է հաստատության լսարանների և ջեռուցման համակարգի մասնակի վերանորոգում:

Կրթության որակի ապահովման գործում մեծապես կարևորվում է դասախոսական կազմի մասնագիտական և մեթոդամակավորական գիտելիքների ու հմտությունների բարձր մակարդակը: 2009 թվականին կենտրոնի բոլոր դասախոսները վերապատրաստվել են ՀՀ կրթության ազգային ինստիտուտում: Հաշվետու տարում երկու դասախոս վերապատրաստվել է Մոսկվայում ICAO-ի և IATA-ի կողմից արտոնագրված հաստատություններում:

«Ավիարուծ» բժշկական կենտրոն ՓԲԸ

2009թ. ընթացքում բժշկական հետազոտության են ենթարկվել 163 օդաչու, 128 բորտուղեկցորդ, 104 կարգավար, 14 կուրսանտ, 2000 վերգետնյա աշխատողներ, իրականացվել է 31000 աշխատողի նախահերթափոխային և նախաթռիչքային բժշկական ստուգում և 2100 սանիտարական հետազոտություն:

2009թ. ընկերության ֆինանսական միջոցների հաշվին արդափականցվել են ֆունկցիոնալ կաբինետի, քիթ-կոկորդ-ականջ բժշկի կաբինետի, կլինիկական լաբորատորիայի և «Զվարթնոց» բժշկական տեղամասի սարքավորումները:

2009թ. ընթացքում իրականացվել է ընկերության դեղատնային մասի ընթացիկ վերանորոգում, համապատասխանեցնելով այն ՀՀ գործող սանիտարական նորմերին:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

2009թ. արձանագրվել է Հայաստանի Հանրապետության ավիացիայի արտադրական ցուցանիշների նվազում: Տնտեսական անկման պայմաններում ուղևորափոխադրումների ծավալների նվազվել է 2,5%-ով, իսկ բեռնափոխադրումների ծավալը՝ 22.5%-ով: ՀՀ-ից մեկնող և ՀՀ ժամանող ուղևորների թվերի տարբերությունը գրեթե կայունացել է և մեկնողների տեսակարար կշիռը կազմել է 50,4% կամ տարբերությունը կազմել է 13502 ուղևոր:

*Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի համակարգի
2007-2009 թվականների հիմնական արտադրական ցուցանիշներ*

Աղյուսակ 1

	Ցուցանիշի անվանումը	Չափի միավորը	2007թ.	2008թ.	2009թ.
1	Փոխադրված ուղևորներ	հազ. մարդ	1405.6	1506.97	1469.35
2	Փոխադրված բեռ և փոստ	տոննա	10010.2	10839	8406.6
3	Թռիչք-վայրէջքներ	հատ	8119	8791	8892
4	ՀՀ օդային տարածքով տարանցիկ չվերթեր	չվերթ	29155	32282	29622

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՂԱԶԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 15-Ի
 No. 40-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄՆԵՐԱՌՎԱԾ
 ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Միջոցառումների անվանումները	Միջոցառումների կատարման արդյունքները
1	2	3	4
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն	208	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի N 1142-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնելը	<u>Կատարված է՝</u> Հայաստանի Հանրապետության կառավարության 04.06.2009թ. N 635-Ն որոշում
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն	209	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հոկտեմբերի 2-ի N 1307-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնելը	<u>Կատարված է՝</u> Հայաստանի Հանրապետության կառավարության 26.11.2009թ. N 1371-Ն որոշում

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՂԱԶԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՆՎԱՐԻ 15-Ի
 No. 40-Ն ՈՐՈՇՄԱՍԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ N 2 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄՆԵՐԱՌՎԱԾ
 ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Գերակա խնդիրները	Գերակա խնդիրների կատարմանն ուղղված քայլերը
1	2	3	4
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն	24	Եվրոպական միացյալ ավիացիոն իշխանություններին (JAA) լիիրավ անդամակցության համար անհրաժեշտ աշխատանքների իրականացում	Կատարված է՝ 2009 թվականի հունիսի 30-ին Սիացյալ ավիացիոն իշխանությունները (JAA) դադարեցրել է իր գործունեությունը և Եվրոպական թռիչքային անվտանգության կարգավորմանը վերաբերող գործառույթները փոխանցվել են Եվրոպական թռիչքային անվտանգության գործակալությանը (EASA), Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը JAA ընթացակարգերին -համապատասխան, համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հետ Եվրոպական քաղաքացիական ավիացիայի կոնֆերանսի քարտուղարությանն (ECAC) ուղարկել է JAA անդամ և թեկնածու պետությունների ավիացիոն իշխանությունների միջև կնքված աշխատանքային համաձայնագրից դուրս գալու մասին գրավոր ծանուցում: Եվրոպական թռիչքային անվտանգության համակարգին ինտեգրվելու շարունակականությունն ապահովելու նպատակով 2009 թվականի հուլիսի 7-ին Եվրոպական թռիչքային անվտանգության գործակալության (EASA) և Գլխավոր վարչության միջև ստորագրվել է համապատասխան աշխատանքային համաձայնագիր:
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն	25	«Օդային փոխադրումներին առնչվող որոշ կանոնների միասնականացման մասին» 1999 թվականի Մոնրեալի կոնվենցիային Հայաստանի Հանրապետության միացում	Կատարված է՝ Վավերացվել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից 28.10.2009թ. թիվ ԱԺՈ-164-Ն որոշմամբ
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն	26	Հայաստանի Հանրապետությունում ամբողջ տարածքի օդային խոչընդոտների էլեկտրոնային քաղաքի ստեղծման աշխատանքների ապահովում	Կատարված է՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պատվերով իրականացվել է «Գեոդեզիայի և քարտեզագրման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից և 2009 թվականի նոյեմբերի 19-ին հրապարակվել է «Աերոնավիգացիոն տեղեկատվական ժողովածու»-ի մեջ